

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2019 թվականի սեպտեմբերի 4 - ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 12^Բ դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Շ. Հարությունյանը և տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Ջ. Գևորգյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրություն:
2. Սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում անհրաժեշտ ուսումնական նյութերի ձեռքբերման համար աշխատանքներ իրականացնելու հարցը:
3. Ընթացիկ հարցեր /կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն/:

1. Լսեցին.- Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրության հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Շ. Հարությունյանը՝ ներկայացնելով ծնողական խորհրդի ընտրության կարգը:

Առաջարկվեց նոր ուսումնական տարվա համար ձևավորել 12^Բ դասարանի ծնողական խորհուրդ՝ նախագահ և չորս անդամ կազմով:

Առաջարկվեց հինգ անդամների թեկնածություն:

Նախագահի թեկնածու առաջադրվեց Աննա Ավագյանը, որից հետո կատարվեց քվեարկություն: 5 կողմ ,0 դեմ ձայնով Աննա Ավագյանը ընտրվեց նախագահ:

Որոշեցին.

12^Բ դասարանում ձևավորել ծնողական խորհուրդ հետևյալ կազմով՝

1. Ավագյան Աննա /նախագահ/
2. Այվագյան Լիլիթ /անդամ/
3. Բադայան Մանուշակ /անդամ/
4. Կասեմյան Ադրինե /անդամ/
5. Աթանեսյան Անժելա /անդամ/

2. Լսեցին.- Սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում անհրաժեշտ ուսումնական նյութերի ձեռքբերման համար աշխատանքներ իրականացնելու հարցը:

Դասղեկ Շ. Հարությունյանը նշեց, որ ծնողները մանկավարժական կոլեկտիվի հետ միասին պետք է փորձեն միասնական պահանջներ ձևավորել երեխաների դաստիարակության հիմնախնդիրների հարցում:

Դասղեկը հորդորեց ծնողներին աջակցել դպրոցին՝ ուսուցիչներին պարտադիր կրթություն իրականացնելու, սովորողներին ուսուցման և դաստիարակության համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու համար: Ուսուցիչներին և դասղեկին օգնել ձեռք բերել կրթության գործընթացի նորմալ կազմակերպման համար անհրաժեշտ ուսումնասովանողական պարագաներ, ժամանակին վճարել դասագրքերի վարձավճարները: Դասղեկը ներկայացրեց, որ դասագրքերի վարձավճարների հավաքագրումն ու հանձնումը գրադարանավարուհուն՝ կատարվում է ծնողական խորհրդի նախագահի և անդամների միջոցով:

Որոշեցին.

Օգնել դասղեկին և ուսուցիչներին՝ ձեռք բերելու անհրաժեշտ ուսումնասովանողական պարագաներ, կազմակերպված իրականացնել դասագրքերի վարձավճարների հավաքագրումը և ժամանակին հանձնել գրադարանավարուհուն՝ համապատասխան ցուցակով:

3. Լսեցին .- Ընթացիկ հարցեր /կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն/:

Դասղեկ Շ. Հարությունյանը նշեց, որ նոր ուսումնական տարում դպրոցը աշխատելու է հնգօրյա ռեժիմով: Դասերը սկսվելու են 9⁰⁰, ավարտվելու են 15⁰⁰-ին: Դասղեկը հորդորեց ծնողներին հետևողական լինել իրենց երեխաների նկատմամբ, հետևել, որ աշակերտները դպրոց հաճախեն պայուսակով, դասագրքերով, աշակերտավայել կեցվածքով: Ենթարկվեն դպրոցի ներքին կարգապահական կանոններին և աշակերտավայել վարք դրսևորեն՝ դպրոցում: Պահել ծնող-դասղեկ-աշակերտ կապը և անհրաժեշտության դեպքում այցելեն դպրոց՝ իրենց երեխաների վրա վերահսկողությունը մեծացնելու նպատակով:

Որոշեցին.

Առավել ուշադիր և հետևողական լինել, որ աշակերտները դպրոց հաճախեն հավուր պատշաճի, լինեն կարգապահ և դասերին պատրաստ:

Ծնողական խորհրդի նախագահ՝  /Ս. Ավագյան /

Քարտուղար՝  /Ս. Բադալյան /